

ՀԱՅԵՐՈՒՍ ՄԱՍԻՆ

Գերմանացի հնաարտիչ Լինչ, որ 1889, 1890, 1893 և 1898 թուականներուն Հայաստանի մէջ ճանապարհորդած և հետազոտութիւններ կատարած է, համակրանքով կը խօսի հայերու մասին: Յարգելի գիտնականի գրածէն կը քաղեմ կարեւորագոյնը: «Հայ ազգին իրական արժանիքը գնահատել կարենալու համար շատ հարկաւոր է հայոց ազգային նկարագիրը Հայաստանի ուսուսանողներուն մէջ ուսուսանարել, և ոչ թէ Փոքր-Ասիոյ մէջ, ուր ամէն կողմապահութիւն կը տիրէ:

Հայը ժիր և ճարպիկ է ինչպէս յայնք, բայց հայը ունինաւ լայն շնորհալոյս ցոլութիւն և պատւոյ բարձր գոգացում: Հայերու քով կը գտնենք ուրիշ լաւ յատկութիւններ ալ, զորս քիչ անգամ միայն գնահատուած են: Ինչպէն գիտենք, թուրքիոյ մէջ հայերուն արգիլուած է զէնք կրել, և մարդիկ առանց պատճառը գիտնալու վճիռ կարճակեն թէ հայերը երկչոտ են: Ես համոզուած եմ որ այս տեսակ մարդիկ ուրիշ վճիռ պիտի սայլին, երբ հայերն ալ ունենային զէնք կրելու ազատութիւն, ինչպէս իրենց թշնամի քիւրտերը:

Յամենայն դէպս սա պարզ և անվիճելի ճշմարտութիւն մըն է, թէ երբ հայերուն առիթ տրուած է, անոնք ոչ միայն անհատական քաջագործութիւններ ցուցուցած են, այլ նաեւ ռազմագիտական հիանալի տաղանդ: Ռուսական 1877ի պատերազմին յաղթապանճ հրամանատարը հայ մըն էր, Լօրիս Մէլիքով: Միեւնոյն պատերազմին մէջ ամենէն նշանաւոր հանդէսացող զօրավարը, Տէր Առեկով, դարձեալ հայ մըն էր: Այն քաջ և երիտասարդ սպան:

որը էրզրումի Ալիզիյէ ամրոցին վրայ կատարուած գիւցաղնական յարձակումը ծրագրեց և գործադրեց, հայ մըն էր, որ իր աներկիւզ քաջասրտութիւնը մահամբ տուժեց: Այսօր սահմանի պաշտպանութիւնը և քիւրտերու վրայ հսկելու պաշտօնը յանձնուած է հայերուն: Այս քանի մը օրինակները թող բաւ համարուն պաշտպանութիւնը համար թէ մանաւանդ այս մասին մէջ հայերուն նկատմամբ մեծ անիրաւութիւն եղած է: Շատ մը ուսուսական նտհանգներու մէջ ամենէն ճարտար աշխատարները հայեր են, և որովհետեւ քնակութեան մեծագոյն մասը ոչ թէ ուսուցիչն այլ հայերէն կը խօսի, խօսուած ուսուցիչն ալ խեղճուկ բան մըն է, հազիւ մարդու հատաւալը կուգայ, թէ ուսուսական նտհանգի մը մէջ կը գտնուի, երբ զլիւսուոր պաշտօնեաները ուսուցիչ լինէին և հոս հոն քոզաքներ չերեւէին:

Անկասկած այս նպատակով պարագաներու մէջ Անդրկովկասեան ժողովրդին մէջ հայկական նոր թագաւորութիւն մը կազմելու գաղափարը ծնունդ պիտի առնէր, սակայն այս երազ մըն է: Իայց ժողովրդի մը որ երկու պետութիւններու սահմանին վերայ կապրի, այս իղձը շատ խելքի մօտ բան է:

Թրքական կառավարութիւնը իր հայ հպատակները ոչ միայն չի պաշտպաներ, այլ նաեւ կը կոտորէ զանոնք: Երբ հայերը Ռուսիայէն բան մը յուսան, իրենց համար դժուար պիտի ըլլայ տնտեսապէս զարգանալէ անդին անցնիլ, և երբ հայը ուղէ Ռուսական իտէալները իւրացնել այս պէտք է նշանակէ իր կարծիքով ազգային բարոյականի և և հոգեւր կորուստ:

Արեւելքի ապագան ինչ որ ալ ըլլայ, սա հաստատ է թէ՛ հայ

յերը ունին յատկութիւններ, որոց միջոցով անոնք պիտի ստանան ազգեցութիւն, թերեւս ոչ իբր ամբողջութիւն, բայց իբրև անհատականութիւն:

Հայ ազգի ոյժի աղբիւրներէն մէկն է ժողովրդի միաբանութեան ոգին, կրօնական տարբերութիւններ հազիւ նշմարելի են հայոց մէջ: Կաթոլիկները անհամեմատ պղտիկ թիւ մը կը կազմեն Ղուսաւորչականներու մէջ և լուսաւորչական եկեղեցին հայոց ազգային զգացումին ամրոցն է:

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ԹՈՒՐԲԻՈՅ ՎԻՃԱԿ

Կ. Պօլսէն «Իրան քիւրտերը Յայթուրկի կը գրեն:

Անպէտ պաշտօնեաներու վոհմակ մը կը կրծէ թուրք կառավարութեան ծուծը և կարգիլէ ամէն յառաջ գիտութիւն: Այս անպէտ վոհմակը ծանր բեռ մըն է պետութեան վրայ և կը սպառնայ իր հիմնադրուած Միայն բարձրագոյն դիրքերու մէջ գտնուող պաշտօնեաներու եօթը տարուան վիճակագրութիւնը կը ցուցնէ պաշտօնեաներու սահմանմատ յաւելումը:

Խաթեր համար պաշտօն ստացող մարդոց մեծագոյն մասը աշխատելու անընդունակ են: Անոնք երբէք իրենց պաշտօնին գլուխը չեն երեւար և պաշտօնին միտքերն ին կիյնա երբ քաղաքին մէջ հաճոյալից լուր մը տարածուի թէ՛ պաշտօնեաներուն ռոճիկ կը բաժնուի: Միջին և և ստորին պաշտօնեաներուն թիւն ալ վերը տրուած չափով բազմացած է, այսինքն եօթը տարուան մէջ 72 0/0, Եթէ բարձր պաշտօնեայի մը տարեկան առնուազն 600 մէճիտ ռոճիկ հաշուենք, մի-

այն ամսոյ համար տարեկան պէտք է 9,207,800 մէճիտ: Մէկ երկու թուանշաններ յառաջ բերենք:

Եօթը տարուան մէջ Սուլթանի գինուորական դահլիճի պաշտօնեաներուն թիւը 159էն 330ի ելած է, կայսերական քաղաքական պաշտօնեաներուն թիւը 48էն 90, արտաքին գործոց նախարարութեան մէջ 61էն 210: Անշուշտ սա շատ հիւանդ վիճակ մըն է:

Թրքական նաւատորմը մը դէպի թրքական ջուրերը ճամբայ իյնալը անցեալ օր հազարուցու Շարժումի ընթերցողներուն քանի մը ֆրանսական թերթեր կը հաղորդէին որ այդ նաւատորմի ճամբայ ելլալու ընդհատակի դաղտի կը մնայ, իսկ մէկ քանին ալ յայտարարելին թէ ֆրանսական նաւատորմը պիտի գրաւէր Պէրսիան:

Իսկ հիմայ արդէն Պսլէն կը հեռագրեն որ ֆրանսական դեսպանատան կառավարիչը հեռագրած է իր կառավարութեան որ Լօրանտի իւրեղիւր կարգադրուած է, որով և ֆրանսա-թրքական վէճը կը դադրի:

Ուրեմն, շատ հաւանական է որ այլ եւս ֆրանսական կառավարութիւնը դադրի սպառնական գիրք բռնել է թուրքիոյ հանդէպ: Ան Սուլթան Համիդ կրկին ազատ համարակ առաջ պիտի տան իր ներքին, հպատակներու համար կործանարար, քաղաքականութիւնը:

Չորս ամիս է որ թուրքիոյ եւ ֆրանսայի յարաբերութիւնները լարուեցան, իսկ դիւանագիտական յարաբերութիւններու խաղուքը երկու ամիս է: Այդ ժամանակի ընթացքին մէջ ֆրանսական մամուլը կանոնաւոր հալածանք սկսաւ թուրք կառավարութեան դէմ, ու իր քննադատութեան նիւթ շինեց թուրքիոյ յոռի վարչութիւնը Սուլթանի պաշտօնութիւնները հայերու եւ ուրիշ քրիտոսեաներու վերաբերմամբ:

Պահ մը եղաւ որ մորդ կրնար կարծել թէ ֆրանսական մամուլը այնքան կատարած է ոչ թէ իր կառավարութեան կրած վիրաւորանքին համար, ոչ ալ իրենց երկու հայրենակիցներուն դրամին համար, այլ ուղ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍՎԱՆԱԼԻՆ

VIII

Միւս օրը անհամբերութեամբ սպասուած էր Վահկին: Անհամբերութեամբ, որովհետեւ ոչ թէ յանձնարարական էի ուզում ալ այլ որոշել էի ինքս անձամբ նրա հետ հայրենիք գնալ:

Ուզում էի ճանապարհորդել նրա հետ օրը, գուցէ աւելի երկար ու բազմակողմանի խօսակցութիւններ կարող էինք ունենալ:

Ճաշից յետոյ, ժամը 3ին Վահկն եկաւ. ես հարգելիքի իմ որոշումը նա շատ ուրախացաւ:

— Շատ լաւ ես մտածել. այդպէս

աւելի լաւ կը լինի, քաղաքում էլ տուն փնտռելու պէտք չեմ ուզալ, ուղղակի ձեր տունը կամ քու իջած տեղը կ'իջնենք:

Ուրեմն ժամի 9ին երկաթուղու կայարանում կը հանդիպենք. դու երկուսիս համար էլ տոմսակ վերցրու, որ ես կայարան հասնելուս պէս իսկոյն կարողանում վագոն մտնել: Իմ «հաշիւ» չի գալիս կայարանի մէջ երկար թափառել:

Ուրեմն ցը տեսութիւն. անպատճառ 9ին այնտեղ լինես:

— Հանգիստ եղիր, անպատճառ 9ին այնտեղ կը լինիմ և տոմսակը էլ պատրաստ կը լինի:

Միայն դու էլ մի ուշանայ, ինձ կը գտնես զբերք և թերթեր ծախողին մօտիկ նստած, կայարանի մեծ դահլիճում:

Վահկն գնաց իր գործին, իսկ ես սկսեցի այդ անպատեղի ճամբորդութեան պատրաստութիւնը տեսնել:

Ճամբորդել առ հասարակ շատ էի սիրում, մանաւանդ Տիգրիսից դէպի հայրենիք. որովհետեւ գրեթէ ամբողջ ճանապարհը անցնում է լեռների, ձորերի և անտառների միջով: Ամառը հրաշալի է այդ ճանապարհը, երբեմն էլ արկածայի, սրովհետեւ կովկասեան հոշակաւոր աւաղակները մեծ մասամբ այդ անտառների և ձորերի մէջ են բուն դնում:

Վերջապա մի կերպ ձանձրանալով սպասեցի մինչեւ երեկոյեան ժամին Տը դրանից յետոյ էլ սպասել չը կարողացայ և Կսկոյն կառք վերցրի երկաթուղու կայարանը գնալու համար:

Կայարան հասայ, դեռ տոմսակ չէին վաճառու. մի կէս ժամ սպասուեց յետոյ տոմսակներն էլ գնեցի և գնացի նստեցի մեր նշանակած տեղում:

Ողիղ 9ին Վահկն էլ եկաւ, բոլորովին կերպարանափոխված. Եւրոպական զգեստներով. դեղին յարդէ զլիարկը

զլին, ամրան վերարկուն թեւին զցած, դեղեցիկ ճանապարհի պայուսակը կոխքից կախ, հաստատ, անվրդով, ինքնավստահ քայլերով:

Ինձ մտենալուս պէս երկրորդ զանգը քաշեցին և մենք շտապեցինք դէպի վագոնները:

Մի քանի րոպէից երրորդ զանգն էլ քաշեց, ու գնացք իր տեղիցը շարժվեց:

Վահկն լուռ ու ժուճ նստեի էր. նա մտածում էր, ով դիտէ ինչ. ես էլ չէի ուղղւմ խանդարել:

Մեր գիմաց նստել էր մի Հայաստանցի գաղթականուհի. իր երկու զուակներով. նրանցից փոքրը, մի երեք տարեկան տղա, մեծ ախորժակով կրծում էր իր երկու թաթիկներով. լուսած սպիտակ և լուզով պատրաստած հացը. իսկ միւսը՝ մօտ 9 տարեկան աղջիկ, հետաքրքիր աչքերով դիտում էր վագոնի մէջ նստածներին և աւելի զբաւեց որոնց, լեզուն իրեն հասկանալի

դակի այն հրէջու թիւներու համար, որոնք թուրքիս մէջ տանջուող քրիստոնեաներուն հանդէպ գործ կը գրուին:

Լորանտոյի խնդիրը կարգադրուելէն յետոյ է որ պիտի հասկցուի թէ ֆրանսական դիւանագետները մամուլը եւ հասարակութիւնը որչափ անկեղծօրէն կը հետաքրքրուէին թուրքիոյ մէջ տանջուող քրիստոնեաներուն վիճակով:

Ի հարկէ մեզի համար աւելի փափաքելի էր սը Սուլթան Համիտ մինչեւ վերջը յամառէր և պատերազմի բռնուէր Ֆրանսայի հետ: Սակայն այդպէս չի պիտի ըլլայ: Ինչպէս մենք արդէն յայտարարած էինք Շարժումի նախկին թիւերէն միտն մէջ:

էն

ՄԵՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ

—(00)—

Կը մտնի, ցուրտ է, սաքերս մերկ են: մարմինս փաթթող ցնցոտիներուն պզտիկ և խոշոր ծակերէն ձիւնախառն հովը ներս կանցնի եւ կը խաչէ մատաղ մորթս. ես ալ որք եմ, չունիմ հայր ու մայր, չունիմ ազգական. ամէնքն ալ մորթուած են քուրդի ու թուրքի ձեռքով. որք եմ ես, հայ որք. իմ անունովս ստակ կը հաւաքուի. ճաներ կը խօսուին, զբերքեր կը հրատարակուին. բանաստեղծութիւններ կը գրուին, կը գրէ ամէն ոք. խաչագողը, շարլաթանը, կեղծարարը, խաղաժողը, աւազակը, սուս ճգնաւորը, սուտ քրիստոնեան, իսկական հայրենասէրը, փառամուրը: կը գրեն ու կը գրեն ամէն տեղ որբի անունն է որ կը հնչուի. ամէն տեղ որբի համար հաց, զոհստ, ուսում կը պահանջուի, բայց շատ քիչերն են որքիս դրամ առուող, երբ ես իրենց առջեւ գամ, որովհետեւ ինծի աւածը լրագիրներուն մէջ չը պիտի յիշուի տուղին անունը չի պիտի փառաբանուի:

Որք եմ ես արտոնոցի մէջ չեմ գտնուիր, բայց քաղքիս մէջ կը թափառիմ. հոս որբանոց չըկայ: պիտի երթամ Հայաստան որպէս զի պաշտպանուիմ: Բայց զրկող չըկայ:

Անցեալ օր գացի դիմակաւոր որբասէրի մը սունը, քիչ մը հաց խնդրելու, դիմակաւորը դուրս ելաւ ու հարցուց—Ի՞նչ կուզես:

չէին. դիտուէր մանաւանդ վրացիներին, որոնց ամէն մէկի վրա դաշոյններ կային:

Վրացիներէն մէկը իր ընկերոջ հետ խօսած միջոցին պատահմամբ ձեռքով բռնեց իր դաշոյնի կոթը, փոքրիկ աղբիկը փոխնալով սեղանի վրա մօրը:

— Ի՞նչի վախեցար, փոքրիկ, հարցրի ես:

— Ինչպէս չը վախենամ, տես դաշոյնը բռնեց: Ես շատ կը վախնամ դաշոյնէ: Նրանով մարդ են մորթում: Գուրտերը մեր գիւղացիներէն շատերն մորթեցին:

— Մի վախնար, այստեղ միշտ դաշոյն են կրում, բայց դեղեցկութեան համար են կրում, իզուր տեղը մարդ չեն սպանում: Այստեղ քրտերի պէս մարդասպաններ շատ քիչ կան:

Յետոյ խօսքս ուղղելով աղվէկայ ժողը հարցրի.

— Քոյրիկ Հայաստանի ո՞ր կողմէն էք:

— Հաց ըսի, որք եմ ես, դու գտնուիր կը սիրես, ամէնքը կը հրաւիրես մեզի օգնելու, բրդուճ մը հաց տուր անօթի եմ:

— Ինչ, կորսուէ ասկէ, դրամներուս կը հաւատաս, գրամներովս ես ապուշները խաբել կուզեմ: Երեսանց հին մեղքերս քաւել կուզեմ: Ես եթէ որք սիրէի, գոնէ իմ բուն անունովս մէջակող կուզայի կորսուէ, ես ոչ միայն որք չեմ սիրեր, այլ զայն որք դարձնող թուրքին ձեռքը համբուրելու պատրաստ եմ: Ետեւ կորսուէ աչքէս. եթէ անդամ մըն ալ քրքու զսո ցնցոտիներդ ալ վրաէզ կը հանեմ:

Ու շարեցայ ես, Աստուած իմ, ուրեմն աս որբերուն համար այնքան աղուոր բաներ գործներու մէջ կան այնպիսիներ ալ որոնք մեր ցնցոտիներն ալ հանելու պատրաստ են:

Բայց ես որք եմ անօթի եմ կը մըսիմ, մարդ մը չունիմ. ո՞վ պիտի պահէ զիս:

ՖՐԱՆՍԱ ԽԵԼՔԻ ԵԿԱԾ

—

(Թանէն կը թարգմանենք հետեւեալը):

«Պրանս եւ թրքական վէճը նոր փուլ մը առած է. բայց այդ մասին հրատարակուած տեղեկութիւնները և տրուած մէկնուածութիւնները բնաւ իրար չեն բռնի: Յաջորդաբար մէյ մը կը հաղորդեն թէ ֆրանսական նաւատորմի զէպի արեւելք ճամբայ ելած է, մէյ մըն ալ յանկարծ հակառակ լուրը կուտան, եւ վերջապէս կըսեն թէ ճամբայ ելած է:

Սա յայտնի է որ նաւատորմի զէպի քիչ քիչ կը յառաջանայ, տակաւին անձանօթ նպատակով մը: Մեզի կիմոցներն թէ 8—10 օրէն թրքական ջուրերը պիտի մտնէ: Անշուշտ Սուլթանին նոր պայմանաժամ մը տալու համար է ճամբորդութեան այս երկարումը. Բայց Սուլթանը մեզի հետ արդէն շատ խաղաց: Երկու ամիսէ աւելի

է որ ֆրանսական դեսպանը Պուլիսը ձգեց, բայց խզումը ամբողջական չըլլալով, քանի որ երկրորդական պայտօնեաները հոն կը մնային, ինչ որ սխալ մըն էր անշուշտ, Օսմանեան դիւանագիտութիւնը օգտուեցաւ այդ հանդամանքէն ալ աւելի խճողելու համար խնդիր մը, որ արդէն շատ ջուր կը վերցնէր: Բանակցութեան պէս բաներ երկար բարակ քաջըջուեցան: Վերջապէս հանդիցանք հոն, ուրկէ մեկնած էինք, ինչ որ արարիչնակ բան չէ արեւելեան դիւանագիտութեան մէջ:

Քրքան ատեն որ կառավարութիւնը որոշած էր սպասել, հարկ չէինք տեսնել հասարակած կարծիքը գրգռել կառավարութիւնը որոշած է, մեզի կը մնայ շնորհատրել պայն և մաղթել որ մեր նաւատորմի զէպի մեկնումը անմիջական և լուրջ հետեանք ունենայ: Խնդիրը առկա մնացած քանի մը վիճելի նիւթեր կարգադրուելու մէջ չէ, այլ արեւելքի մէջ մեր ազդեցութիւնը զօրացնելու մէջ: Մասնակի շահերու խնդիրները երկրորդական տեղ կը բռնեն. անօթ զիպուածական պատճառներ են միայն: Մենք անոնցմէ կը հասկնանք որ այն ամէն խնդիրներուն մէջ սը մեր բարոյական և նիւթական ազդեցութիւնը կը տուժէ, Սուլթանը իրեն սովորութիւն ըրած է շատ աննշան կարեւորութիւն մը տալ մեր պահանջներուն:

Եւ այդ վիճակը երեկունէ չի ս'սեր: Հայաստանի ջարդերու ժամանակ հակառակ Բոլ Գամբօնի հեռատես ճիգերուն Պրանսա և իր ան տեսնի կառավարութիւնը մեր ազգային բրէստիմին ծանր հարուած մը տուին: Սմբողջ Եւրոպան թէ և թերացու քաղաքակրթական և մարդասիրական պարտականութեանը մէջ, բայց մենք եղանք այս ընդհանուր սը-

խալէն ամենէն շատ տուժողը, որովհետեւ յայտնի կամ գաղտնի Սուլթանին եղեռնագործութիւնը քաջալիրող միւս պետութիւնները արդէն ստացան կամ ապագային ստանալ ապահովուած են իրենց հաճոյակատարութեան վարձքը:

Անկէց ի վեր միտն մ'զի համար ամէն բան վատթարացած է: Երեկուան պատահած վէճը պիտի կրնար վաղն ալ պատահել բոլորովին տարբեր պատճառի մը համար: Իրողութիւնը այն է որ ֆրանսական խօսքը Պուլսոյ մէջ հեղինակութիւն չունէր և եթէ դեռ տարակուսողներ կային, Բ. Դրան վերջին խաղերը կը ցուցնէին թէ թուրքերը իրենց համար վտանգ մը չէին տեսնել Պրանսայի հետ խզումին մէջ: Ոչ մեր գեղգուտութեան և ոչ ալ մեր սպառնալիքներուն կը հաւտային: Բայց յանցանքը մերն է, շատ սուղ կը վճարենք մեր երբեմնի սխալները, և եթէ աւելի երկար համբերէինք այս ամենու վրայ պիտի աւելնար նաեւ ստորնացումը նոր ցնորական վէճերու պատճառով:

Մենք առաջ Աւստրիա, Ամերիկա և Իտալիա ճնշողական միջոցներու դիմեցին յարգել տալու համար իրենց դրօշակը Թուրքիոյ մէջ: Այս նախընթացները մեզի իրաւունք կուտային աւելի շուտ գործելու: Մենք ուրիշներէ աւելի շատ զխօսներ կրեցինք և անոնցմէ աւելի երկար համբերութիւն ունեցանք: Արեւելքի այս երկրի մէջ, ուր Պրանսա այնքան բազմաթիւ ու այնքան անձնուէր յաճախորդներ ունէր, ուր մեր դրօշակը յաղթականօրէն տարածուած էր սկսան հաւատալ, ու այն ոչ առանց պատճառի, թէ մենք ամենայնուրեւ կարգը ինկած ենք: Ահա թէ ի՞նչու կառավարութիւնը հակառակ տեղեկութեանց պակասէն

— Մշոյ կողմերէն: Առաջի կոտորածներու ժամանակ փախանք. իմ ամուսինս Բաթում էր: Ամուսնուս հայրը և եղբայրները սպաննեցին, բայց կոտորածի օրը ես զաւակներով հորանց տուն կը գտնուէի: Երեսունընեակ եղբորս օգնութեամբ զաւակներս առայ փախայ: մինչեւ հիմա ամուսնուս քով էի:

Հիմա հիւր կերթամ եղբորս քով սը Ղարս կը գտնուի:

Ղարս ուրիշ մշեցիներ շատ կան: գիւղերուն մէջ: Ան գիւղերը աւելի մեր երկրի կը նմանին: Միտոս չը համբերեց Բաթում մնալ:

— Մենք էլ գէպի Ղարս կերթանք, ուրեմն մեզի հետ ձեզ ալ կը տանինք աւելի շուտ կը հասնէք և աւելի անվտանգ:

— Բայց դուք ինչով պիտի երթաք Եփոսթի կառքով: Աս տուղ է. մենք չենք կրնար այդ շափ վճարել:

Յանկարծ վահէն ուշքի եկաւ և անց:

— Մենք ձեզինց ստակ չենք առնի մեր ստակովը կը տանենք:

— Չէ. մենք ձրի չենք ուզեր երթալ, փառք Աստուծոյ կրնանք մեր ճամբու ծախքը վճարել: Աղքատ գաղթականներ շատ կան, այն ստակը, որով մեզ պիտի տանէք, տէք աղքատ գաղթականներուն: Բայց մենք չենք կրնար շատ ստակ վճարել:

— Ետեւ լաւ, վրա բերեց Վահէն պատիկները արդէն ամէն տեղ անվրճար կը ճամբորդեն: դու միայն մի ձիու համար կը վճարես: որ այնչափ պէտք է արժենար, որչափ երեքիդ համար հասարակ կառքը: Աւելի չուտով աւելի ապահով պէտք է տեղ հասնիս և ուտելիքիդ համար էլ քիչ ծախք կուտենաս:

Այս խօսքերի վրայ Հայաստանի հայրենի մի սուր ակնարկ նետեց Վահէի և ինձ վրա. ու բաւական նայելուց յետոյ ասաց:

— Աղէկ մարդիկ կերեւաք, համար

ճայն եմ: Միտն կերթանք: Իրաւն ըսած ես ալ կը մտածէի թէ աս երկան ճամբան ինչպէս պիտի մինակ երթամ:

Ազգաժառանգ մարդու մը վրա նա մակ մը ունի: Բաթումէն ան պիտի ինծի լաւ արտապահի մը վարձէր, եթէ դուք աղէկ մարդիկ էք, ան մարդը ձեզի ալ ծանօթ պիտի ըլլայ:

— Տուր այդ նամակը ասացի ես:

Տիկինը առանց վարանելու տեղ նամակը ծրարի վրա գրված էր իմ մի բարեկամի հասցէն որը գաղթականութեան հոսանքի ժամանակ գաղթականներին խնամող յանձնախմբի անդամներէն մին էր Աղբի-Փայի մէջ:

— Օ, իմ մտերիմ բարեկամն է եւ մենք միտն այս առաւօտ նրա սունը կերթանք:

Կարծես տիկինը բոլորովին հանգստանալով, մանուկներին յարգուեց ընանալ և ինքն էլ հանգստացաւ:

(Շարունակելի)

յառաջացած մամուլի և հասարակած կարծիքի անստորիկեան կրնայ վստահել ըլլալ թէ իր հակառակորդներուն մեծամասնութիւնը միացած է իր բարեկամներուն հետ քաջալերելու համար կառավարութեան բոլոր ընկերները ազգային արժանապատուութեան ի նպաստ: Մեր որոշումներու դանդաղութեան վրայ զարմացողները խիստ կը գովեն մեր քայլը, լաւ է ուշ քան երբէք առածին համաձայն: Բայց երբ այս տեսակ խնդիր մը կայ, Ֆրանսայի համար տարակոյս կամ վարանում չի կրնար գոյութիւն ունենալ: Կարծիքներու տարբերութիւնները և երկրորդական հակառակութիւնները կանհերանան, երբ գրոշակը կը պարզուի:

Թ. Ա. Ն.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մուլթանը իրաւէով մը հրամայեր է վճարել 350 հազար ոսկին Լորանտի խնդիրը կարգադրելու համար:

Պարսթ մերժած է, յայտարարելով որ վճարման ժամանակը որոշուած չէ, ինչպէս որ կը պահանջէ ֆրանսական կառավարութիւնը:

Ֆրանսայի խորհրդարանին մէջ ընկերվարական երեսփոխան Բամպա հարցապնդում ըրեր է կառավարութեան Թուրքիոյ հետ ունեցած յարաբերութիւններու մասին, պնդած է որ կառավարութիւնը միջամտած չէ հայկական կոտորածներուն, թէեւ ինք պիտի արգիլեր կոտորածները կրկնելու:

Երեսփոխան Բամպէն հարցուցած է թէ Ֆրանսա Ռուսական դաշնակցութենէն ի՞նչ առաւելութիւններ ստացած է:

Տէլքառէլ պատասխաներ է թէ Ֆրանսա առաւելութիւն մը չի փնտռեր, բայց կուզէ որ ը ի շահերը յարգուին, և պիտի ապացուցանէ որ թոյլ չը պիտի տայ որ թուրքերը իրենց խորամանկութիւններով հարստահարեն Ֆրանսայի համբերութիւնը և կառավարութեան գործադրութիւնները պիտի նոյն չափով եռանդուն ըլլան, սրչափ մեծ էր համբերութիւնը: Աւելցուցած է նաեւ որ երբէք հայկական խնդիրը բարձի թող ըրած չէ նոյն պէս և միւս քրիստոնեաներու հովանաւորութիւնը: Սակայն միայն Ֆրանսան չէ որ Պերլինի դաշնագրութեամբ խոստւած էր:

— 30 ի չափ ծախային սպաներ ապստամբած են իրենց ամուս-

կա նները չստանալուն համար: Մուլթանը իր թիկնապահներէն մին ղրկած է, որ սպաններուն թեր հաշիւ բան մը վճարած է: — Հայոց Պատրիարքարանը տեղեկութիւն ստացեր է որ Մուշի մէջ բաղմաթիւ հայերու ուսուցանութեան դիմելու լուրը սխալ է. միայն քանի մը հարիւր հայեր դիմում ըրած են գեոպանին:

Մուլթան այ իր կողմէն քննութիւնն նշանակած է այդ խնդրոյն առթիւ:

— Յունական նաւատորմի ղի այցելութիւնը շատ գէշ ազդած է թուրքերուն վրայ:

— Տարանէլը և Բոսֆորը կը պատրաստուի դիմադրելու ֆրանսական նաւատորմի ղին: Խեղճ Թուրքիա իր խարխուլ նաւերով կուզէ դիմադրել ֆրանսական նաւատորմի ղին:

— Բեթերսպուրկի ուսական գեոպանը Մուլթանին հաղորդեր է թէ Կրէտէի Յունաստանին միացման խնդիրը որոշուած է արդէն, և շուտով տեղի պիտի ունենայ:

— Թուրք կառավարութիւնը ամենեւին միտք չունի Միսսիթօնի համար փրկանք վճարելու և յայտարարելով որ Միսս Սթօն աղէկ գիտէր երկրին վիճակը, ի՞նչու թուրք իշխանութենէն, իր ճամգորդած միջոցին, պահպաններ չէ խնդրած:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Ֆիլիպեանց կղզիներու ամբողջ ժողովուրդը Ամերիկացիներուն դէմ ելած է:

Ինչպէս անգլիացիները մինչեւ օրս կը մաքառին պօէրները ընկճելու, նոյնպէս ամերիկացիք ճիգեր կը թափեն Իսպանիայի ձեռքէն սղատած Ֆիլիպինցիները իրենց իշխանութեան զտակ առնել և գեռ յաջողած չեն:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պիւլֆին և Վիլհէլմ կայսեր միջեւ անհամաձայնութիւններ ծագեր են: Կը կարծուի թէ Պիւլֆի հրաժարականը պիտի տայ:

— Թօլսթոյի ուս սինօզին դէմ գրած պատասխանը գերմանիոյ մէջ կառավարութեան կողմէն գրաւուեր է, սրովհետեւ այդ գրուածքը ամէն եկեղեցւոյ կազմութեան դէմ է եղեր:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լահէի միջազգային իրաւարարատեանը նոյեմբերին պիտի վիճարանուի պօէրներու առաջար-

կութեան վրայ, Հարաւային ասիայի խնդիրը կարգադրելու համար:

Կը կարծուի թէ միմիայն իր ձեռնհասութեան խնդիրը պիտի քննէ, եւ երբ համոզուեցաւ թէ ինք ձեռնհաս չէ այդ խնդիրը կարգադրելու անուշադիր պիտի թողու:

— Անգլիացիք շոտ նեղը ձըգեր են Պօթա զօրավարը, սակայն ան կրկին կրցեր է ճողպարիլ անձիւրացիներու ձեռքէն:

— Կրսուի թէ Գրիւզէր քարուղարը դաղտնի պաշտօնով Բեթերսպուրկի դացեր է:

— Քօէրները բացարձակապէս կը հերքեն այն լուրը թէ որոշուած ըլլայ մահուամբ պատժուած իւրաքանչիւր ըմբոստի համար իբրեւ փոխարինութիւն, անգլիացի սպա մը հրացանի բռնել:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Շտա մը նահանգներու մէջ սովը կատարելապէս կը թագաւորէ և խռովութիւններ տեղի կուենան: Կառավարութիւնը լրագիրներուն արգիլած է մանրամասնութեանց մէջ մտնալ, այլ արտօնած է միայն յայտարարել միայն պաշտօնական այբուբենը ստացուած լուրերը:

Ճիպութի Զ. Խ. — Ձեզի ՂԸՐ-կուելիքը այսօր զրկուեցաւ այս տեղէն մեծ դժուարութեամբ որովհետեւ փոտան գժուարութեամբ ընդունեց, ուշանալուն գլխաւոր դատաւաններէն մին ալ այդ եղած է: Ճիպութի հետ փոտայի պայմանները այնքան ալ կանոնաւոր չեն, ուղղակի Ֆրանսա աւելի դիւրին պիտի ըլլար:

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՆԱՐԺՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակազուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ:

Գիները յոյժ դիւրամտալի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՒՅ

Ա Ձ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին իշխան Պօրիի մկրտութեան սոթիւ ապուած գործածուած նամակադրօշներ 1—5—15—25 սանդիմ, Դիյեի ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վառնա

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի
— 0 —
Յ. Կ. ՊՕՆՃՈՒԲԵԱՆԻ
Նոր Ընթերցարան (պատկերազարդ) Առաջին տարի (Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)
Դին 70 Անթ.
Կը ծախուի Վառնայ Մ. Գալթակ-ճեանի քով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
— 0 —
Հայդերբերգում հիմնել է մի գրադարան, որ նպատակ է դրել ծանօթացրնել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կիսնքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ: Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեստ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը և խնդրում ենք այն անձանց հատուտութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ նւիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով
A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ
— 0 —
Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու և ստանալու ամէն տեսակ դիմում ընկելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով
Իւնիոն sk 2 Էդիսբուրն Արմ.
Լիօրոք րիւ սը Լիֆօլ սը Շիմի 2
Սուխ Ժընէլ
Կարգողիւ Յաննաճոզով

Ա Ձ Դ
— 0 —
Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ զիւղէն Պէկօ Ասատուրեանի, հասնատակազմ չէկ պէխով ու յօնքերով, 6 ամիսէն ղի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը միմիայն բերլ հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով:

Ա Ձ Դ
— 0 —
Սիլիսդրէի տղապիտ արական վարժարանի համար կուզուի վրկայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու հայերէնէ ու ֆրանսերէնէ զատ նաեւ երկրորդական գիտելիքներ, փափաքողք բանակցութեան համար թող բարեհաճին դիմել տեղւոյն ազգային վարժարանին հսգարձութեան:

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна